ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՆՍԾՏԻԿ-ՀՄԱ-ԱՊՁԲ-18/1» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստ

ք. Երևան 13 հուլիսի 2018թ. Ժամը 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան, Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան, Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լ. Բաղդասարյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված Տեղեկատվության գնահատում:
3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

2.ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատում

2.1 Սահմանված ժամկետում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացվել է Տեղեկատվություն, համաձայն որի առաջին տեղ զբաղեցրած «Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊԸ մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

2.2 Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացնելու հանգամանքից:

Հիմք ընդունելով վերը նշված 2.1 և 2.2 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. **«Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊԸ** մասնակցի կողմից ներկայացված հայտը **մերժել**:
2. **Առաջին տեղ** զբաղեցրած մասնակից ճանաչել **«Պատրոն ՌՄ» ՍՊԸ**-ին:
3. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկել ծանուցում «Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊԸ մասնակցին, որպեսզի վերջինս ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի համաձայն սահմանված ժամկետում շտկի արձանագրված անհամապատասխանությունը:
4. Էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ի, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Քվեարկությամբ ընդունվել է՝ կողմ 5, դեմ 0:

3.Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

3.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ ՊԵԿ ներկայացված հարցման պատասխանը ստանալուց հետո:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան
	Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան
	Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Լ. Բաղդասարյան